

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան
պետական համալսարան» ՊՈԱԿ-ի
ռեկտորի 28.12.2015 թ. թիվ 1027 Լ/Կ հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

արձանագրություն թիվ 9 24.12.2015թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 4 27.05.2020թ.

Վանաձոր
2015

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգը սահմանում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) ռեկտորին առընթեր ֆինանսատնտեսական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, աշխատանքի կազմակերպման ու իրականացման, որոշումներ կայացնելու և դրանք ներկայացնելու գործընթացները:

1.2 Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, Համալսարանի կանոնադրությունը:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Հանձնաժողովը իրավասու է հարցեր քննարկելու, արձանագրային որոշումներ կայացնելու և ռեկտորին դիմելու հետևյալ շրջանակներում.

- 1) Համալսարանի ֆինանսատնտեսական պլանների ձևավորում,
- 2) Համալսարանի տնտեսական քաղաքականության վերաբերյալ առաջարկների ներկայացում,
- 3) Համալսարանի բյուջեի նախագծի քննարկում,
- 4) Համալսարանի ֆինանսատնտեսական իրավիճակի, ծախսերի արդյունավետության վերլուծություն,
- 5) ֆինանսական ռեսուրսների տնտեսման ուղղությունների մշակում,
- 6) հարկերի և տուրքերի վճարման գնահատում,
- 7) պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների քննարկում և հաստատում.
- 8) Համալսարանի հաստիքացուցակի ձևավորում և դրանում փոփոխությունների կատարում,
- 9) Համալսարանի աշխատակիցների աշխատավարձերի դրույքաչափերի որոշում,
- 10) Համալսարանի ֆինանսատնտեսական ռազմավարության հետ կապված հարցերի քննարկում,
- 11) Համալսարանի առանձին ստորաբաժանումների կողմից ֆինանսական միջոցների օգտագործման չափաբաժինների սահմանում և դրանց նպատակային օգտագործման ստուգում,
- 12) հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վերաբերյալ մեթոդաբանական խորհրդատվություն (ուսման վճարների և կրեդիտների հաշվարկման գծով),
- 13) Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ և (կամ) հանձնաժողովի անդամ(ներ)ի առաջարկությամբ ընթացիկ այլ ֆինանսատնտեսական հարցերի քննարկում:

2.2 Հանձնաժողովի որոշումները կրում են խորհրդատվական բնույթ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

3.1 Հանձնաժողովը ձևավորվում է և նրա կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:

3.3 Հանձնաժողովի կազմը ենթակա է փոփոխության ռեկտորի հրամանով:

3.4 Հանձնաժողովը գործում է ռեկտորին առընթեր:

3.5 Հանձնաժողովի նիստը վարում է նախագահը՝ ռեկտորը:

3.6 Հանձնաժողովի նախագահը՝

ա) հրավիրում է նիստերը,

բ) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները:

3.7 Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) հանձնաժողովի անդամներին իրազեկում է առաջիկա նիստի օրվա և ժամի մասին, տրամադրում նիստի օրակարգը,

բ) արձանագրում է հանձնաժողովի նիստերը,

գ) իրականացնում է հանձնաժողովի գործավարությունը, ապահովում փաստաթղթերի պահպանումը:

3.8 Հանձնաժողովի անդամները

ա) մասնակցում են հանձնաժողովի նիստերին,

բ) ծանոթանում են ներկայացված փաստաթղթերին,

գ) արտահայտում են իրենց կարծիքները:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՐԳԸ

4.1 Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

4.2 Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ռեկտորի կամ հանձնաժողովի ցանկացած անդամի նախաձեռնությամբ՝ ռեկտորի կողմից:

4.3 Հանձնաժողովի նիստը համարվում է իրավագոր հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

4.4 Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են և համարակալվում, համարակալումն սկսվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից:

4.5 Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

4.6 Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և այլ փաստաթղթերը պահվում են հանձնաժողովի քարտուղարի մոտ:

4.7 Հանձնաժողովում առաջարկությունները քվեարկության են դրվում բաց քվեարկության միջոցով:

4.8 Հանձնաժողովի նիստի ընթացքը և հանձնաժողովի անդամների կարծիքը հրապարակման ենթակա չեն:

4.9 Հանձնաժողովը յուրաքանչյուր հարց քննարկելու արդյունքում ընդունում է որոշում, եթե դրա օգտին քվեարկել են նիստի մասնակիցների կեսից ավելին:

4.10 Անհրաժեշտության դեպքում կամ օրակարգում ընդգրկված հարցի քննարկմանը հնարավոր շահառուներին ընդգրկելու նպատակով Հանձնաժողովի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հանձնաժողովի անդամ չհանդիսացող՝ ռեկտորի կողմից հրավիրված այլ անձինք:

5. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Մույն կանոնակարգը և նրանում կատարվող լրացումներն ու փոփոխությունները գիտական խորհրդի կողմից ընդունվելուց հետո վավերացվում են ռեկտորի հրամանով: